

ԱԿԱՆԱՎՈՐ ՏՆՏԵՍԱԳԵՏ-ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՄԱՆԿԱՎԱՐԺԸ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ

(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանի ծննդյան
80-ամյակի առթիվ)

Լրացավ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Եղիշի Խոջաբեկյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 50 ամյակը: Նա Հայաստանում, ԱՊՀ երկրներում և դրա սահմաններից դուրս լայն



ճանաչում ստացած անվանի տնտեսագետ-գիտնականներից է: Անցել է բեղմնավոր կյանքի ուղի, ավելի քան հինգ տասնամյակ զբաղվում է տնտեսագիտությամբ և տնտեսագիտական կադրերի դաստիարակման գործով:

Երևանի պետական համալսարանն ավարտելուց հետո մինչև 1960 թ. վերջերը որպես խմբագիր աշխատել է «Հայպետհրատում», ապա անընդմեջ աշխատում է ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում. 1960 թ. ընտրվել է ավագ գիտաշխատողի պաշտոնակատար, 1963 թ. նշանակվել է ինստիտուտի գիտնական քարտուղար, 1967 թ. մինչև 2006 թ. պարբերաբար ընտրվել է ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների բաժնի վարիչ, 1983 թ. ինստիտուտի փոխտնօրեն, 1999–2006 թթ.՝ տնօրեն, 2006 թ.՝ գլխավոր գիտաշխատող է:

Վ. Խոջաբեկյանը մեծ ավանդ ունի տնտեսագիտության զարգացման գործում: Նա ավելի քան 400 հրատարակված աշխատությունների, այդ թվում՝ ավելի քան մեկուկես տասնյակ մենագրությունների, հարյուրավոր հոդվածների, դրանցից բացի խմբագրված գրքերի և 160 չհրատարակված գիտական զեկուցումների, զեկուցագրերի, էլույթների և արխիվային այլ նյութերի հեղինակ է: Աշխատությունները հայերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն և այլ լեզուներով լույս են ընծայվել Երևանում, Մոսկվայում, Կիևում, Բեռլինում, Նյու Յորքում, Փարիզում, Աթենքում, Դելիում, Թեհրանում, Վիեննայում, Թբիլիսիում և այլուր՝ նրան բերելով արժանի ճանաչում արտասահմանյան մի շարք երկրներում: 1970-ականներից 2005 թ. նա գիտական բանախոսություններով հանդես է եկել միջազգային գիտաժողովներում (Երևան, Մոսկվա, Բեռլին, Լենինգրադ, Սիդնեյ, Կիև, Բուդապեշտ, Աթենք, Դելի, Թեհրան, Վիեննա, Լայպցիգ, Դրեզդեն, Ալմա Աթա, Թբիլիսի, Տաշքենդ, Աշխաբադ, Օրենբուրգ և այլն), որոնք զետեղվել են միջազգային և հայրենական պարբերականներում:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը Վ. Խոջաբեկյանին՝ 70-ամյակի առթիվ հղած ուղերձում գրում է. «Հիրավի, դժվար է գերազնահատել Ձեր ծառայությունները տնտեսագիտության տեսության ու պրակտիկայի զարգացման գործում... հեղինակելով հիմնարար աշխատություններ, որոնց հատուկ են արդիական շունչը, գիտական նորույթը, ապագան կանխատեսելու ոգին, հիմնավոր լուծումներ պահանջող եզրահանգումները... Մեր երկրի գիտական հասարակությունը գոհունակությամբ է նշում Ձեր գիտական խոշոր ձեռքբերումները Հայաստանի բնակչության և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, երկարատև հեռանկարում դրանց միտումների բացահայտման, զբաղվածության օրինաչափությունների ընդհանրացման, արդի փուլում աշխատանքային շուկայի ձևավորման, քաղաքակենտրոնացման, ժողովրդագրության ու սոցիալ-տնտեսական կանխատեսման, աղետի գոտում և Արցախում ժողովրդագրական քաղաքականության հիմնախնդիրների հետազոտության ասպարեզում»:

Վ. Խոջաբեկյանի գիտական գործունեությունը իր ժամանակին բարձր էր գնահատում ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Մի առիթով Վ. Խոջաբեկյանի մասին ակադեմիայի նախագահության որոշման (10.08.1988) տեքստի վրա նա մակագրել է. «Վ. Խոջաբեկյանը շատ խոշոր մասնագետ է դեմոգրաֆիայի և վիճակագրական հարցերում»:

Ժողովրդագրության զարգացման օրինաչափությունների դրսևորման ուղղությունների, միտումների և բնակչության աճի գործոնների դերի բացահայտման ու գնահատման հիման վրա Վ. Խոջաբեկյանը կանխատեսել է Հայաստանի բնակչության ժողովրդագրական պատկերը երկարատև հեռանկարի տարբեր փուլերի համար: Դրանք մասնավորապես ընդգրկում են 1966–1985 թթ., 1970–2000 թթ., 1979–2016 թթ., ինչպես նաև 2000 թվականից 2050–2060-ական թվականների ժամանակահատվածները: 1968 թ. Մոսկվայում ռուսերեն հրատարակվեց «Բնակչության ընդլայնված վերարտադրությունը և աշխատանքային ռեսուրսների օգտագործումը 1966–1985 թթ. Հայկական ԽՍՀ-ում» տեսական հետաքրքրություն և կիրառական կարևոր նշանակություն ունեցող եռահատոր աշխատությունը (Վ. Խոջաբեկյանի գիտական ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ): Պատշաճորեն գնահատելով կատարվածը՝ ՀԽՍՀ ԳԱ նախագահությունն այն որակել է որպես «տեսական մեծ հետաքրքրություն և կիրառական կարևոր նշանակություն ունեցող» ուսումնասիրություն: Որոշվել է «աշխատանքը ներկայացնել ՀԽՍՀ պետպլանին՝ երաշխավորելով նրա օգտագործումը պլանավորման ժամանակ՝ հանրապետության ժողտնտեսության հեռանկարում»¹:

«Հայկական ԽՍՀ բնակչությունը և աշխատանքային ռեսուրսների վերարտադրության արդի հիմնախնդիրները» (1973) մենագրությունը նվիրված է ժողովրդագրության տեսական ու գործնական հարցերին:

«Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828–1978 թթ.)» (1979) հաջորդ մենագրությունում Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու պատմական նշանակության բացահայտման ընդհանուր հենքի վրա

¹ ՀԽՍՀ ԳԱ նախագահության նիստի արձանագրություն, Երևան, 1969, № 9 (602):

պատմատնտեսագիտական գրականության մեջ առաջին անգամ քննարկվում են Հայաստանի բնակչության վերարտադրության առանձնահատկությունները, զբաղվածության էվոյուցիան և այլ հարցեր:

1980-ական թվականներին Վ. Խոջաբեկյանը ձեռնարկել է մասշտաբների և բովանդակության տեսակետից մի եզակի գիտական մշակում, այն է՝ 1979–2016 թթ. հանրապետության, դրա բոլոր քաղաքների, շրջանների և գյուղական վայրերի բնակչության (ընդամենը 158 միավոր) հեռանկարային թվի կանխատեսման աշխատանքները²: ՀԽՍՀ ԳԱ նախագահությունը 1987 թ. մարտին հաստուկ նիստով ըստ արժանվույն գնահատել է տվյալ աշխատանքի «տեսական, գիտական, գաղափարական և ժողովրդատնտեսական մեծ նշանակություն ունեցող բարձր մակարդակը»³:

Վ. Խոջաբեկյանը հանդես եկավ նոր խոսքով ու գիտական մտահղացումներով՝ աղետյալ շրջաններում ստեղծված արտակարգ իրավիճակի ժողովրդագրական հետևանքները հաղթահարելու քաղաքականությամբ և սոցիալական բազմաբնույթ խնդիրները լուծելու հիմնարար առաջարկություններով: Եվ պատահական չէ, որ 1988 թ. դեկտեմբերի 16-ին ՀԽՍՀ ԳԱ ընդհանուր ժողովում այդ հարցին նվիրված նրա բոլոր առաջարկությունները արժանացան ԽՍՀՄ Մի-նիստների խորհրդի նախագահ Ն. Ռիժկովի հավանությանը:

Վ. Խոջաբեկյանը զբաղվել է Արցախյան հիմնահարցերով: Նա այն անձանցից մեկն էր, որ աշխարհահռչակ նկարիչ Մարտիրոս Մարյանի, հանրահայտ երգչուհի Գոհար Գասպարյանի, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Արտաշես Առաքելյանի, տնտեսագիտության դոկտոր Ներսիկ Թովմասյանի և լեզվաբանության դոկտորներ Վարազ Առաքելյանի ու Համո Օհանյանի հետ 1971 թ. վերջերին, ԽՍՀՄ - կազմավորման 50-ամյակի նախօրյակին նամակով դիմեցին ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևին՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը և Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը, որպես Հայաստանի պատմական տարածք, վերջինիս վերամիավորելու մասին:

Վ. Խոջաբեկյանի ուսումնասիրության կարևոր բնագավառներից է զբաղվածության հիմնահարցերը: Ի դեպ, 1997 թ. փետրվարի 27-ին ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Մարգարյանին ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից՝ վարչապետի հանձնարարությամբ գրված նամակով շնորհակալություն է հայտնվում Վ. Խոջաբեկյանին՝ կառավարությանը ներկայացրած աշխատանքների համար, ուրոք ուսումնասիրվում են գործնական կիրառման համար⁴:

² Չպետք է մոռանալ, որ տարիների ընթացքում 1970-ական թվականների վերջերից մինչև 1980-ական թվականների կեսերը Վ. Խոջաբեկյանի գիտական ղեկավարությամբ վիթխարի ջանք է գործադրվել Հայաստանի բնակչության և աշխատանքային ռեսուրսները տարբեր կտրվածքներով 1979–2016 թթ. հեռանկարային կանխատեսումներ իրականացնելու համար, որոնք ի պահ հանձնվել են Հայաստանի ազգային արխիվ. տե՛ս ՀՀԱ, ֆ. 2264, ց. 1-9, գ. 1-14, թ. 1-59, մաս 2, ՀԱԱ, ֆ. 2264, ց. 1, գ. 15, թ. 1-73, մաս 3, ՀԱԱ, ֆ. 2264, ց. 1, գ. 16, թ. 1-70, ՀԱԱ ֆ. 2264, ց. 1, գ. 14-16, թ. 1-202:

³ ՀԽՍՀ ԳԱ նախագահության նիստի արձանագրություն, Երևան, 1987, № 6 (992):

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 266. ց. 1, գ. 80, թ. 1:

1998 թ. Վ. Խոջաբեկյանի «Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում» լույս ընծայված աշխատությունում՝ արդի՝ փլուզման քննական և քննադատական վերլուծությունն է, ծանր դրությունից ելքի ուղիների որոնումն ու ճշգրտումը: Մենագրությունում ներկա ժամանակի և՛ հոգսերն են, և՛ ժամանակին տրվող պատասխանները, կիրառելի խորհուրդներն ու ուղենիշները: 1998 թ. հունիսի 1-ին վարչապետի գրությամբ շնորհակալություն է հայտնվում հեղինակին՝ ակտիվ դիրքորոշման և գործարար առաջարկությունների համար⁵: Հետաքրքիր է, որ Խոջաբեկյանը, շարունակելով իր ուսումնասիրությունները արդյունաբերության բնագավառում, առաջարկությունների տեսքով 2008 թ. վարչապետին է հասցեագրել «Արդյունաբերության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», ինչի համար Էկոնոմիկայի նախարարությունն իր շնորհակալությունն է հայտնում:

Նման առաջարկություններ է ներկայացրել կառավարությունը գյուղատնտեսության զարգացման և արտագաղթի կրճատման հարցերի վերաբերյալ և արժանացել դրական գնահատականի:

Վ. Խոջաբեկյանի վերջին տարիների (2001–2006 թթ.) ստվարածավալ արժեքավոր մենագրությունները⁶ (հայերեն, անգլերեն, ռուսերեն) նվիրված են Արևելյան Հայաստանի բնակչության աճի, տեղաշարժերի, 300 տարվա էթնոժողովրդագրական գործընթացների առանձնահատկությունների և օրինաչափությունների բացահայտմանը: Կանխատեսվել են տնտեսության առանձին բնագավառներում զբաղվածության հեռանկարային կառուցվածքային փոփոխությունները:

Մենագրություններում մերկացվում են 1988–1991 թթ. հայաթափության ընթացքը Ադրբեջանի ողջ տարածքում, ինչը հաճախ տեղի ունեցավ բնաջնջման և մեծ բռնագաղթի հետևանքով: Բացահայտվում են ադրբեջանցի վայ- պատմաբանների և ժողովրդագիրների պատմական բոլոր փորձերը, որոնք, հենվելով «թուրքական զինանոցի» վրա, զբաղված են ոչ թե իրական պատմություն կերտելով, այլ «պատմաշինարարությամբ»: Ադրբեջանցիների վկայակոչած հիստերիկ փաստերը դատապարտվում և շարադրվում են նորովի, ելնելով վիճակագրական անաչառ տվյալներից, որով ջրի երես է հանվում հակահայկական և հայ ժողովրդի բնաջնջման սադրիչ քաղաքականության էությունը:

Չափազանց հանգամանալից քննարկման է արժանանում ՀՀ բնակչության ընդհանուր համայնապատկերը՝ 1920 թ. մինչ օրս: Քննական վերլուծության միջոցով մեծ տեղ է հատկացվում Հայրենական մեծ պատերազմին նախորդող և հետպատերազմյան տարիների ՀՀ բարձր ծննդի, 1960-ի կեսերի, 1970-ականի կեսերի ծննդի և մահացության խիստ նվազման (աշխարհում բնութագրվում է ամենացածր մահացությամբ), վաղ ամուսնության և հետագայում նրա բարձր գործակցի գոյացման ու ծննդաբերության աճի, առանձին փուլերում ծննդի և ամուսնության հարափոփոխ անկմանը:

⁵ Տե՛ս ՀՄԱ, ֆ. 266, ց. 1, գ. 81, թ. 1:

⁶ Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը XIX–XX դարերում, XXI դարի շեմին, Երևան, 2002, Regularities of the Demographic Processes in Armenia in the 19th and 20th Centuries and at the Threshold of the 21st Century, Yerevan, 2004; Демография и проблемы занятости в Армении с начала XIX века до середины XXI века, Ереван, 2006.

«Ժողովրդագրական իրավիճակը բարելավելու հիմնախնդիրները Հայաստանում» գիտական ուսումնասիրությունը 2008 թ. ներկայացվել է ՀՀ վարչապետին: Ներկայացված աշխատանքում ուսումնասիրության առանցքն է կազմել հանրապետությունում ժողովրդագրական քաղաքականություն վարչատարածքային կտրվածքով մշակելու և այն հեռանկարում կիրառելու անհրաժեշտությունը: Խիստ կարևորելով Վ. Խոջաբեկյանի հեռանկարային կանխատեսումները՝ այն ամբողջությամբ հաշվի է առնվել 2007–2015 թթ. առողջապահության համակարգի զարգացման ծրագրում:

Բնակչության նվազումը տեղի է ունենում նաև երիտասարդության արտագաղթի պատճառով: Ի հաշիվ արտագաղթող երիտասարդության, բնակչությունը ծերանում է: Ծնունդն ավելացնելու նպատակով պետք է նպաստել կանանց հասկացվող արտոնություններին և ապահովել ներգաղթը: Գիտնականը ժամանակին առաջարկել է հանրապետությունում ծնված երեխայի համար հատկացվող միանվագ նպաստի չափերն անընդհատ ավելացնելու հետ՝ այն ավելացնել նաև ըստ ծնվող երեխաների հաջորդականության:

Վ. Խոջաբեկյանը մշակել է նաև գաղթի քաղաքականության գիտական հիմունքները և առաջարկում է ներգաղթողների նկատմամբ կիրառել պետական մի այնպիսի քաղաքականություն, որով կարելի է ազդել ներգաղթող և արտագաղթող բնակչության կառուցվածքի վրա՝ երկրի պրոֆեսիոնալ-որակական ներուժը պահպանելու համար:

Վ. Խոջաբեկյանի գործունեությանը բնորոշ է նաև գիտական այլ կազմակերպությունների հետ համագործակցությունը: Վ. Խոջաբեկյանը Խորհրդային Միության ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի «Ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների» պրոբլեմային խորհրդի անդամ էր: ՀԽՍՀ ԳԱ-ի և ԳԴՀ գիտությունների ակադեմիաների միջև կնքված երկկողմանի համաձայնագրով 1976–1980 թթ. ավարտված աշխատանքի արդյունքներն արժանացել են երկու ակադեմիաների բարձր գնահատականին: ԳԴՀ Կենտրոնական տնտեսագիտության ինստիտուտի աշխատակիցների և Վ. Խոջաբեկյանի հետ համատեղ կատարված գիտական ուսումնասիրությունը՝ «Ժողովրդագրության հիմնախնդիրները և աշխատանքային ռեսուրսների վերարտադրությունը» վերտառությամբ, 1983 թ. հրատարակվել է ռուսերեն: 1984 թ. այն արժանացել է ԽՍՀՄ գիտատնտեսագիտական վարչության նախագահության համամիութենական մրցանակի: Խոջաբեկյանի հեղինակած բաժինը 1983 թ. առանձին գրքով լույս է տեսել Բեռլինում՝ գերմաներեն:

Նկատենք նաև, որ Վ. Խոջաբեկյանի գիտահետազոտական աշխատանքի արդյունքները հաճախ են եղել ՀՀ ԳԱՍ նախագահության ուշադրության կենտրոնում: Նրա ուսումնասիրությունների արդյունքները և եզրահանգումները, երաշխավորագրերը, հանձնարարականներն ու հիմնավորումները ներկայացվել են ԳԱ տարեկան ժողովում (1987 թ.), քննարկվել են ԳԱ և ԳԱՍ նախագահության նիստերում (1969 թ., 1987 թ., 1994 թ., 1999 թ., 2001 թ. և այլն), բազմիցս՝ հասարակագիտական, պատմության և տնտեսագիտության, հետազայում՝ հումանիտար բաժանմունքների տարեկան ժողովներում:

Վ. Խոջաբեկյանը գիտահետազոտական արդյունավետ աշխատանքներ կատարելու համար 1973 և 1978 թթ. արժանացել է ՀԽՍՀ ԳԱ «Պատվոգրի», 1979 թ. նրա կենսագրությունը զետեղվել է Հայկական սովետական հանրագիտարանի 5-րդ և 1995 թ. Հայկական համառոտ հանրագիտարանի 2-րդ հատորներում, 2000 թ. Ամերիկյան կենսագրական ինստիտուտի բառարանում: 1999 թ. Ամերիկյան կենսագրական ինստիտուտի կողմից նա արժանացել է «1998 թ. Տարվա մարդ» կոչմանը:

Ծավալուն է Վ. Խոջաբեկյանի գիտամանկավարժական աշխատանքների շրջանակը: Մոտ կես դար նա դասախոսել է հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում, իր գիտելիքներն անմնացորդ հաղորդել է սաներին: Մշտապես նրա ուշադրության կենտրոնում է եղել կադրերի պատրաստման ու վերապատրաստման կարևոր գործը: Նրա գիտական ղեկավարությամբ ատենախոսություններ են պաշտպանել բազում ասպիրանտներ ու գիտաշխատողներ: Հրատարակած աշխատություններն այսօր դասագրքային արժեք ունեն բուհական, հետբուհական և լրացուցիչ մասնագիտական ուսումնական ոլորտներում:

Ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանն իր բեղմնավոր գործունեության արդյունքում ստեղծել է հանրապետության ժողովրդագրության և աշխատանքային ներուժի օգտագործման գիտական ուղղություն և դպրոց: Այսօր նա, իրավամբ, հանրապետության տնտեսական ժողովրդագրության հիմնադիրն է և շարունակում է դրա գիտական ղեկավարումը:

Երկար տարիներ Վ. Խոջաբեկյանը եղել է ՀՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի տեղակալը, բյուրոյի անդամ, հումանիտար գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ, փիլիսոփայության, տնտեսագիտության և իրավագիտության պրոբլեմային գիտական, Հայկական սովետական հանրագիտարանի տնտեսագիտական, ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի գիտական, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ատենախոսության պաշտպանության մասնագիտական խորհուրդների նախագահ, Հայկական սովետական հանրագիտարանի գիտախմբագրական, տարբեր ամսագրերի խմբագրական խորհուրդների, այդ թվում՝ «Պրոբլեմի տեորիի ի պրակտիկի ու պրավլենիա» միջազգային ամսագրի՝ ՀՀ - ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի կողմից ներկայացուցիչ-անդամը և այլն:

Վ. Խոջաբեկյանն իր ողջ գործունեության ընթացքում աչքի է ընկել սկզբունքայնությամբ, գիտական բարեխղճությամբ, աշխատասիրությամբ ու պարտաճանաչությամբ: Նա իր հայրենանվեր ստեղծագործական ողջ գործունեությունը նվիրաբերել է ի շահ տնտեսագիտության, ի շահ հայրենիքի: Ահա թե ինչու 2003 թ. «Գիտության բնագավառում ձեռք բերած ակնառու նվաճումների համար» պարգևատրվել է Մովսես Խորենացու անվան մեդալով, իսկ տարիներ առաջ՝ շքանշաններով, ԽՍՀՄ պետպլանի նախագահության և համամիութենական «Գիտելիք» ընկերության վարչության պատվոգրերով:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ԷՌԻԿ ՕՐԴՅԱՆ